

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

2022-2024

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2022

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

2019-2021թթ. ընթացքում ՀՀ դատախազությունը մասնակցել է մի շարք ծրագրերի կառավարման և համակարգման գործընթացին, մասնավորապես՝

- ՀՀ Նախագահի 30.06.2012թ. «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N ՆԿ-96-Ն կարգադրություն,
2018 թվականին ուժի մեջ մտավ «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքը, որում ամրագրվեցին դատաիրավական բարեփոխումներ՝ դատախազության գործունեության արդյունավետության և հաշվետվողականության բարձրացմանն ուղղված կառուցակարգեր և դրույթներ:
- ՀՀ Կառավարության 27.12.2012թ. «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 15-Ն N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշմամբ հաստատված հավելված,
ՀՀ դատախազության համակարգում անչափահասների գործերով արդարադատության իրականացման նպատակով որոշ դատախազներ առանձնացվել են: Բացի այդ, Արդարադատության ակադեմիայում այժմ դատախազներն անցնում են վերապատրաստում «Անչափահասների իրավունքների պաշտպանությունը քրեական վարույթի ընթացքում» թեմայով:
- ՀՀ կառավարության 2015թ. N 871-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2015-2017թթ. բարեփոխումների ծրագիրը և ժամանակացույց (ինչը բխում էր Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի ապրիլի 23-իՆԿ-53-Ա կարգադրության 36-րդ կետի պահանջներից), որի 20.2 և 20.3 ենթակետերով ՀՀ դատախազությունը հանդիսացել է կատարող գերատեսչություն:
- ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշումը՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2019-2021 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» (ըստ ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ցանկի), որի 12 (Կատարել ուսումնասիրություններ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումն անմիջապես ընդդատյա մարմնին հանձնելու կառուցակարգերում հնարավոր թերությունների և հակասությունների վերհանմանն ուղղությամբ) և 70

(Փոփոխություններ կատարել «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերում) կետերով ՀՀ դատախազությունը հանդիսանում է պատասխանատու մարմին և համակատարող, իսկ 75 կետով նախատեսվում է 2020-2021թթ. ընթացքում իրականացնել վերապատրաստումներ դատավորների, դատախազների, ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների, փաստաբանների, ոստիկանության աշխատողների, ինչպես նաև սոցիալական աշխատողների համար՝ ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության թեմաներով:

- ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի թիվ 726-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում 2019-2021թթ. Ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման» ազգային 5-րդ ծրագիր (ըստ ծրագրի իրականացման ժամանակացույցի), որի 2.2.3. կետի համաձայն ՀՀ դատախազության համապատասխան աշխատողների համար կազմակերպվել են դասընթացներ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման՝ հատկապես աշխատանքային և երեխաների թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ: Բացի այդ, 4.1.2. կետի համաձայն ՀՀ դատախազությունը շարունակել է համագործակցությունը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ արդյունավետ պայքարի նպատակով օտարերկրյա իրավապահ մարմինների ու մասնագիտացված միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:
- ՀՀ նախագահի 2002թ.-ի 1075-Ն հրամանագրով ստեղծված ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ դեմ պայքարի հարցերով Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 30.11.2018թ. 34-րդ նիստում հաստատված «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2019-2021թթ. Ազգային ռազմավարություն», որի նպատակն է ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի մասնակիցներին, ներպետական և միջազգային լայն հանրությանը ներկայացնել ՀՀ ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ դեմ պայքարի համակարգի զարգացման տեսլականը՝ 2019-2021թթ. ազգային ռազմավարության, դրա իրագործման գործողությունների ծրագրի և իրագործման նկատմամբ մոնիտորինգի գործիքի կիրառության միջոցով:

2019-2020թթ. և 2021թ.մարտի 1-ի դրությամբ ՀՀ դատախազությունը մասնակցել է 5 և ավելի ծրագրերի կառավարման ու համակարգման գործընթացի (2021թ. Կանխատեսումների համաձայն 2021թ. նախատեսվել է մասնակցել 7 ծրագրի):

2. ԿՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2022-2024 թվականին ՀՀ դատախազության գործունեության հիմնական խնդիրներն են.

1. Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտ

Կոռուպցիայի և կազմակերպված հանցագործության դեմ պայքարի ոլորտում ՀՀ դատախազության կողմից, մասնավորապես.

- ձեռնարկվելու են անհրաժեշտ միջոցառումներ՝ կոռուպցիոն բնույթի և կազմակերպված հանցագործությունները ժամանակին հայտնաբերելու և բացահայտելու հարցում այլ իրավապահ մարմինների հետ համագործակցությունը խորացնելու ուղղությամբ,
- իրականացվելու են համապատասխան միջոցառումներ՝ ուղղված կոռուպցիոն երևույթների ծագման, դրանց պատճառների և նպաստող պայմանների, օրենսդրական թերի կարգավորումների հայտնաբերմանը՝ օրենսդրական բարեփոխումների իրականացմանը նպաստելու նպատակով,
- միջոցներ են ձեռնարկվելու կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու ուղղությամբ, այդ թվում՝ հասարակական հնչեղություն ունեցող կոռուպցիոն հանցագործությունների քննության ընթացքի և ավարտի մասին հանրությանն իրազեկելու միջոցով,
- ակտիվացվելու է համագործակցությունը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գործունեություն իրականացնող մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ,
- շարունակվելու են միջոցներ ձեռնարկվել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ:

2. Քրեական հետապնդում հարուցելու ոլորտ

Քրեական հետապնդում հարուցելու ոլորտում ՀՀ դատախազությունը.

- ապահովելու է առերևույթ հանցանք կատարած յուրաքանչյուր անձի նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով քրեական հետապնդման հարուցումը:

3. Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ոլորտ

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- ուժեղացվելու է հսկողությունը հետաքննության և նախաքննության մարմինների կողմից հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների գրանցման, հաշվառման և ընթացքը լուծելու նկատմամբ,

- հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության ապահովման նպատակով ուժեղացվելու է ըստ անհրաժեշտության դատախազական ներգործության միջոցների (ցուցումներ, միջնորդագրեր, միջնորդություններ և այլն) կիրառման պրակտիկան,
- հիշյալ ոլորտում դատախազական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, առաջնահերթությունները նախանշելու նպատակով շարունակաբար վերլուծվելու և ամփոփվելու են հանցավորության վիճակի, կառուցվածքի և շարժընթացի վերաբերյալ վիճակագրական տվյալները,
- միջոցներ են ձեռք առնվելու կոնվենցիոն ու քրեադատավարական հիմնադրույթների պահպանմամբ յուրաքանչյուր քրեական գործով արդյունավետ քննություն ապահովելու, միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու նպատակով իրավապահ բոլոր մարմինների ջանքերի համախմբման ուղղությամբ:

4. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ոլորտ

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- խստացվելու է հիշյալ ոլորտում դատախազական հսկողության առարկա հանդիսացող իրավական ակտերի և մյուս փաստաթղթերի օրինականության և հիմնավորվածության նկատմամբ հսկողությունը և, ըստ անհրաժեշտության, դատախազական ներգործության միջոցներ կիրառելու պրակտիկան,
- շարունակվելու են հետևողականորեն միջոցներ ձեռնարկվել՝ ուղղված ազատագրկման վայրերում կոռուպցիոն երևույթների հայտնաբերմանը և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելուն,
- ուժեղացվելու է հսկողությունը ազատագրկման վայրերում պահվող անձանց հիմնարար իրավունքների, հատկապես վերջիններիս բժշկական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու նկատմամբ,
- պարբերաբար ուսումնասիրվելու և ամփոփվելու է պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության ոլորտում դատախազական հսկողության պրակտիկան և, ըստ այդմ, կանխորոշվելու են պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտի գերակա ուղղությունները:

5. Դատարանում մեղադրանքի պաշտպանության և վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկման ոլորտներ

Դատարանում մեղադրանքի պաշտպանության և վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկման ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- բարձրացվելու է դատարանում մեղադրանքի պաշտպանության որակը,
- ապահովվելու է մեղադրանքի պաշտպանության գործառույթի ինքնուրույնությունը և ակտիվությունը՝ մինչդատական վարույթից դրա անբաժանելիությունը չափավոր բացառելու միջոցով,
- վեր են հանվելու մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման գործառույթների իրականացման հետ կապված իրավակարգավորման խնդիրները ու նախաձեռնողականություն է ցուցաբերվելու դրանք հստակ ուղղություններով լուծելու հարցում,
- սահմանվելու և ապահովվելու են վերահսկողության մեխանիզմներ մեղադրանքի պաշտպանության նկատմամբ՝ նկատի ունենալով այդ դատավարական փուլի առանձնահատկությունները,
- ապահովվելու է գործի ելքի վրա ազդող դատավարական գործողությունների՝ մեղադրանքը փոփոխելու և մեղադրանքից հրաժարվելու լիազորությունների օրինականությունը,
- իրականացվելու է միասնական պատժողական քաղաքականություն՝ ապահովելով պատիժների կիրառման համաչափությունը,
- ուժեղացվելու է վերահսկողությունը դատական ակտերի բողոքարկման ոլորտում՝ պատշաճ բողոքներ նախապատրաստելու և ներկայացնելու, վճարել բողոքարկման ոլորտում հատկապես իրավունքի զարգացման խնդիրներ առաջադրելու նպատակով:

6. Պետական շահերի պաշտպանության ոլորտ

Պետական շահերի պաշտպանության ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- ակտիվացվելու է օրենքով սահմանված կարգով և դեպքերում քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի, վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի և քրեական դատավարության կարգով հանցագործությամբ պետությանը ուղղակի պատճառված գույքային վնասի հատուցման հայց հարուցելու համար անհրաժեշտ ուսումնասիրությունների կատարման պրակտիկան,
- բարձրացվելու է դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից պետությանը պատճառված վնասի հատուցման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությունը, հաշվի առնելով դատախազների ծանրաբեռնվածության աստիճանը՝ ակտիվացվելու է տարածքային դատախազությունների համագործակցությունը հանրապետական և տեղական հսկողական-տեսչական մարմինների հետ՝ դրանց ակտերով արձանագրված վնասների կապակցությամբ դատախազական ներգործության միջոցներ ձեռնարկելու միջոցով:

7. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտ

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու նպատակով իրականացվելու են հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություններ, այդ նպատակով պահանջվելու են անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր, տեղեկություններ (այդ թվում՝ հարկային կամ մաքսային գաղտնիք համարվող), նախնական քննության տվյալներ,
- ուսումնասիրության արդյունքներով դիմումներ են ներկայացվելու առաջին ատյանի դատարան՝ հայցի նախնական ապահովման միջոցներ, ինչպես նաև ապացույցների նախնական ապահովում կիրառելու մասին.
- ներկայացրած նյութերի և հավաքված ապացույցների հիման վրա կազմվելու են ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացություններ, հարուցվելու են գույքի քաղաքացիական բռնագանձման հայցեր, կնքվելու են հաշտության համաձայնություններ.
- նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատական ակտի վերանայման բողոք նախապատրաստելու և ներկայացնելու նպատակով վերսկսվելու են ավարտված ուսումնասիրությունները:

8. Ըստ 2019 թվականի կառավարության ծրագրի՝ 2020թ.-ին սկսվել է միասնական էլեկտրոնային համակարգի՝ արդարադատության ոլորտում ընդգրկված մարմինների (դատարաններ, դատախազություն, քննչական մարմիններ, ոստիկանություն և այլն) համար, գործարկման աշխատանքները և նախատեսվում է 2021թ.-ին ավարտին հասցնել այն:

2022-2024 թվականին փորձաքննության ծառայությունների հիմնական խնդիրներն են.

1. Փորձաքննության ծառայությունների տրամադրում
 - Քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակված դատական փորձաքննությունների կազմակերպումն ու իրականացումը՝ համապատասխան պատշաճ որակի և դատավարական ու մեթոդական ընթացակարգերի պահպանմամբ:
 - Քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող դատական փորձաքննությունների պատշաճ իրականացում:
2. Մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման կազմակերպում
 - Տվյալ ծախսային ծրագրի իրականացման արդյունքում պետական պատվերի շրջանակներում փորձագիտական ծառայություններ կմատուցվեն նախաձեռնող

այնպիսի իրավասու մարմիններին, ինչպիսիք են քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինները՝ Հայաստանի Հանրապետության դատարանները, Հայաստանի Հանրապետության դատախազությունը, Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը և փոքր թվով՝ Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության համապատասխան լիազորություններ ունեցող այլ մարմինները:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները				Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ	Կապը ՄԱԿ-ի կայուն զագացման նպատակների և ցուցանիշների հետ	
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը			
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը			Ժամկետը
Հանցագործությունների բացահայտման մակարդակի բարելավում	1013 Փորձաքննության ծառայություններ	Ձեռագրաբանական (հատ)	554		574			
		Հեղինակային (ներառյալ մտավոր սեփականության) (հատ)	4		4			
		Փաստաթղթաբանական (հատ)	806		846			
		Ֆոտոտեխնիկական (հատ)	20		26			
		Դիմանկարային (հատ)	25		34			
		Տեսաձայնագրառման և աուդիոձայնագրառման (հատ)	220		235			
		Հետքաբանական (հատ)	550		271			
		Ձգաբանական (հատ)	276		296			
		Պայթուցանյութաբանական (հատ)	85		94			
		Նյութագիտական (հատ)	1321		1481			
		Սննդային (հատ)	88		112			
		Կենսաբանական/ հողագիտական (հատ)	800		846			
		Հրդեհատեխնիկական (հատ)	298		319			
		Շինարարատեխնիկական (հատ)	303		342			
		ՃՏՊ հանգամանքների (հատ)	240		296			
		ՏՄ տեխնիկական վիճակի (հատ)	50		71			
		Տրանսպորտային հետքաբանական (հատ)	100		116			
		Տնտեսագիտական (հատ)	78		86			
		Ապրանքագիտական (հատ)	1210		1415			
		Համակարգչատեխնիկական (հատ)	415		468			

Մշակութային արժեքներ (հատ)	93		112		
Հոգեբանական (հատ)	128		146		
Դատաբժշկական (հատ)	454		549		
Դատաքիմիական /թունաբանական/ (հատ)	995		1003		
Դատագենետիկական /ԴՆԹ-նույնականացում/ (հատ)	2		2		
Օդորոլոգիական /այդ թվում մարդու կողմից թողնված հոտային հետքերի/	2		2		
Ճարտարագիտատեխնիկական	148		168		
Լինգվիստական	16		16		
Էկոլոգիական	30		36		
Իրենց բարդությամբ պարզ փորձաքննությունների տեսակարար կշիռը՝ փորձաքննությամբ տրված եզրակացությունների ընդհանուր քանակի մեջ, տոկոս	30		30		
Իրենց բարդությամբ միջին բարդության փորձաքննությունների տեսակարար կշիռը՝ փորձաքննությամբ տրված եզրակացությունների ընդհանուր քանակի մեջ, տոկոս	40		40		
Իրենց բարդությամբ բարդ փորձաքննությունների տեսակարար կշիռը՝ փորձաքննությամբ տրված եզրակացությունների ընդհանուր քանակի մեջ, տոկոս	30		30		
Գիտականորեն հիմնավորված փորձագիտական մեթոդների և մեթոդիկաների, ստուգաչափված սարք-սարքավորումների կիրառմամբ, որակավորված փորձագետների կողմից փորձաքննությունների իրականացմամբ ստացվող որակյալ և արժանահավատ արդյունքների ապահովումը՝ միջազգային պահանջներին և ԻՍՕ 9001:2008 ու վերաբերելի ստանդարտների պահանջներին համապատասխան, տոկոս	100		100		
Փորձաքննության կատարման ժամկետը ելակետային տվյալների (օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր՝ համեմատական հետազոտման համար) ստացման օրվանից՝ բարդության տեսանկյունից պարզ փորձաքննության	10		10		

		դեպքում, կատարման առավելագույն ժամկետ օր՝					
		Փորձաքննության կատարման ժամկետը ելակետային տվյալների (օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր՝ համեմատական հետազոտման համար) ստացման օրվանից բարդության տեսանկյունից միջին բարդության փորձաքննության դեպքում, կատարման առավելագույն ժամկետ օր՝	15		15		
		Փորձաքննության կատարման ժամկետը ելակետային տվյալների (օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր՝ համեմատական հետազոտման համար) ստացման օրվանից՝ բարդության տեսանկյունից բարդ փորձաքննության դեպքում, կատարման առավելագույն ժամկետ օր՝	25		25		
		Նախաձեռնողին տեղեկացմամբ 25 օրը գերազանցող փորձաքննությունների տեսակարար կշիռը, տոկոս՝	10		10		
Փորձաքննություններն շանակ ելուն ելակետային տվյալների ձեռքբերման հրավերային առարկաների անցողի համակարգերի աշխատանքային փուլում	1144 Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում	Դասընթացների քանակ	40		30		
		Վերապատրաստվող ծառայողների թվաքանակ	360		360		
		Վերապատրաստվող կին/տղամարդ հարաբերակցություն, տոկոս	39/61		45/55		
		Վերապատրաստման դասընթացներում ընդգրկված թեմաների քանակը	71		40		
		Ուսուցման խմբերի քանակ	27		40		
		Ստուգարքի արդյունքում դրական գնահատական ստացողների տեսակարար կշիռը, տոկոս	99		99		
		Մեկ դասընթացի միջին տևողությունը, ժամ	71		71		
		...					

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

«Ն դատախազության գերակայություններն են՝

- բարձրացնել կոռուպցիոն հանցատեսակների և կազմակերպված հանցավորության բացահայտման ցուցանիշների և պետական այլ մարմինների հետ համագործակցության արդյունավետությունը,
- նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, ինչպես նաև նպաստել կոռուպցիոն երևույթների կանխարգելմանը և կոռուպցիոն դրսևորումների ծագմանը նպաստող

պայմանների վերացմանը, այս տեսանկյունից օրենսդրական բարենպաստ դաշտի ձևավորմանը,

- նպաստել կոռուպցիոն երևույթների, ինչպես նաև դրանց կանխարգելմանն ու այդ երևույթների դեմ պայքարի անհրաժեշտության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության բարձրացմանը:
- նպաստել առերևույթ հանցանք կատարած անձանց բացահայտմանը և հայտնաբերմանը՝ անշեղորեն և միասնականորեն իրականացնելով կատարված հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու անխուսափելիության սկզբունքի իրացումը,
- նպաստել հանցավորության մակարդակի դրական շարժընթացի ապահովմանը, հանցավորության մակարդակի դրական ցուցանիշների բարելավմանը:
- նպաստել քրեորեն պատժելի արարքների ժամանակին և լրիվ բացահայտմանը, առերևույթ հանցանք կատարած անձանց հայտնաբերմանը և նրանց քրեական պատասխանատվության ենթարկելուն,
- ապահովել հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության ապահովման վերաբերյալ օրենսդրական պահանջների անշեղ իրացումը,
- ապահովել անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու, օրենքի և դատարանի առջև հավասարության, անձի և բնակարանի անձեռնմխելիության, գործի արդարացի քննության, անմեղության կանխավարկածի, կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման, սահմանադրական, քրեադատավարական ու միջազգային իրավական այլ հանրաճանաչ սկզբունքների պատշաճ իրացումը:
- նպաստել պատժի նպատակների իրականացմանը,
- ապահովել պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ոլորտում օրենքի գերակայությունը և միատեսակ կիրառումը,
- ապահովել ազատությունից զրկված անձանց իրավունքների առավել ամբողջական և արդյունավետ պաշտպանությունը:
- նպաստել արդարադատության և միասնական դատական պրակտիկայի ապահովմանը,
- նպաստել միասնական և կանխատեսելի պատժողական քաղաքականության ապահովմանը,
- նպաստել քրեական դատավարության մրցակցության, ինչպես նաև քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիության, պատժի անհատականացման, գործի արդարացի քննության և մյուս սկզբունքների իրականացմանը:
- ապահովել պետության շահերի արդյունավետ պաշտպանությունը,
- նպաստել պետությանը պատճառված գույքային վնասի վերականգնմանը և ոչ գույքային շահերի պաշտպանությանը,

- կանխել պետությանը պատճառվելիք հնարավոր վնասները:
- 2019 թվականի ընթացքում Կազմակերպությունում 29 փորձագիտական տեսակներով փորձաքննություններից գերակայել են հիմնականում՝ նյութագիտական (799 հատ), ապրանքագիտական (800 հատ), փաստաթղթաբանական (600 հատ), դատաքիմիական /թունաբանական/ (2702 հատ), ձեռագրաբանական (440), կենսաբանական (606 հատ), հետքաբանական (671 հատ), դատաբժշկական (450) փորձաքննությունների տեսակները:
- 2020 թվականի ընթացքում կազմակերպությունում 29 փորձագիտական տեսակներով փորձաքննություններից գերակայել են հիմնականում՝ դատաքիմիական /թունաբանական/ (466 հատ), ապրանքագիտական (2043 հատ), նյութագիտական (2162 հատ), փաստաթղթաբանական (844 հատ), հետքաբանական (845 հատ), կենսաբանական/հողագիտական (1078) ձեռագրաբանական (454), դատաբժշկական (329 հատ), շինարարատեխնիկական (455) փորձաքննությունների տեսակները:
- Հիմք ընդունելով 2019-2020 թվականների ընթացքում կատարված փորձաքննությունների տեսակների գերակայությունը կարելի է կանխատեսել, որ այն կրելու է շարունակական աճը պահպանող բնույթ նաև 2022-2024 թվականների համար:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն	ՀՀ սահմանադրություն 06.12.2015 Դատախազության մասին 17.11.2017թ ՀՕ-198-Ն ՀՀ օրենքը
Փորձաքննության ծառայություններ	Կառավարության 22 հուլիսի 2004 թվականի N 1127-Ն որոշում
Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում	

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

1) **Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ:** Պարտադիր ծախսեր են հանդիսանում դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն ծրագրի քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրում միջոցառման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ՝ շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում, այլ նպաստներ բյուջեից տնտեսագիտական հողվածով նախատեսված ծախսերը:

2) **Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ:** Հայեցողական ծախսեր են հանդիսանում դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն ծրագրի քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության

Ճառայությունների տրամադրում միջոցառման հետ կապված շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում, այլ նպաստներ բյուջեից տնտեսագիտական հոդվածով նախատեսված ծախսերը:

Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին են դասվում այլ նպաստներ բյուջեից տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված ծախսերի միջոցառումները:

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը ¹	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները ²	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը ³
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1087	11001	Քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրում		Էներգետիկ ծառայություններ, Կոմունալ ծառայություններ, Կապի ծառայություններ, Ապահովագրական ծախսեր, Ծառայողական գործուղումների գծով ծախսեր, Վարչական ծառայություններ և այլն	ՀՀ սահմանադրություն 06.12.2015 Դատախազության մասին 17.11.2017թ ՀՀ-198-Ն ՀՀ օրենքը
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1013	11001	Փորձաքննության ծառայությունների տրամադրում			Կառավարության 22 հուլիսի 2004 թվականի N 1127-Ն որոշում
1144	11001	Մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման կազմակերպում			
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝					

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

2022-2024թթ. Ժամանակահատվածում ՀՀ դատախազության դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն ծրագրի ժամանակ հաշվի են առնված դատախարակական համակարգի բարեփոխումների, հանցավորության դեմ պայքարի աշխատանքների ուժեղացման ու արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, որը պահանջ է առաջացնում համակարգի պահպանման ծախսերում կատարել որոշակի փոփոխություններ:

¹Ներկայացվում է համապատասխան միջոցառման շրջանակներում իրականացվող պարտադիր (պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) կամ հայեցողական (հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) պարտավորությունների համառոտ նկարագիրը՝ այդ թվում մատուցվող ծառայությունների, տրամադրող օրենսդրական և շահառուների շրջանակը:

²Սյունակը լրացվում է միայն պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների համար:

³ Սյունակում կատարվում են հղումներ պարտադիր ծախսային պարտավորությունները սահմանող օրենքների և միջազգային պայմանագրերի կոնկրետ դրույթների վրա, իսկ այդ պարտավորությունների շրջանակներում գործադիր մարմնի վերապահված հայեցողական իրավասությունների դեպքում՝ նաև այդ իրավասությունները սահմանող իրավական ակտերի վրա: Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում կատարվում են հղումներ այդ ծախսային պարտավորությունները սահմանող իրավական ակտերի վրա:

ՀՀ ֆինանսների նախարարությանը մեր կողմից ներկայացվող 2022-2024թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը հիմնավորվում է հետևյալ ցուցանիշներով՝

1. Աշխատավարձի ֆոնդը կազմում է 5189305.1 հազ. դրամ, որի հաշվարկը կատարվել է «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 12.12.2013թ. թիվ 157-Ն ՀՀ օրենքին և ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737-Ն որոշման պահանջներին համապատասխան, որից աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածով նախատեսված է 4047205.1 հազ. դրամ, պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ հոդվածով՝ 1085600.0 հազ. դրամ, իսկ քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում հոդվածով՝ 56500.0 հազ. դրամ գումար (պարգևատրման ֆոնդը կազմում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով տվյալ մարմնի համար նախատեսված աշխատավարձի տարեկան ֆոնդի առնվազն 10 տոկոսը):

2. Էներգետիկ ծառայությունների հոդվածով նախատեսվում է 110344.6 հազ. դրամ, այդ թվում՝ էներգետիկ ծառայությունների և էլեկտրաէներգիայով ջեռուցման ծառայությունների համար՝ 58151.2 հազ. դրամ, իսկ գազով ջեռուցման ծառայությունների համար՝ 52193.4 հազ. դրամ: Հաշվարկը կատարված է ՀՀ կառավարության 28.04.2005թ. N 629-Ն որոշման համաձայն:

3. Կոմունալ ծառայություններ հոդվածով նախատեսվում է 8300.0 հազ. դրամ, այդ թվում՝ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների համար նախատեսվել է 7500.0 հազ. դրամ, դեռատիզացիայի, դեզինսեկցիայի մասով նախատեսված է 800.0 հազ. դրամ, որի հաշվարկը իրականացվել է ՀՀ դատախազության հաշվեկշռում գտնվող 28 շենքերի հաշվով:

4. ՀՀ դատախազության կապի ծառայությունների վճարների հոդվածով նախատեսվել է 55940.0 հազ. դրամ: 2021 թվականի համեմատ փոփոխություն նախատեսված չէ:

5. Ապահովագրական ծախսեր հոդվածով 2020թ. փաստացի ծախսը կազմել է 2520.0 հազ. դրամ: 2021թ. նախատեսված է 2520.0 հազ. դրամ, հետևաբար 2022թ. ևս կկազմի 2520.0 հազ. դրամ:

6. Ներքին գործուղումներ հոդվածով նախատեսված է 12500.0 հազ. դրամ: 2022թ. 2021թ.-ի նկատմամբ փոփոխությունները պայմանավորված է թվաքանակի և քրեական գործերի աճով:

7. Վարչական ծառայությունների հոդվածով նախատեսված է 10500.0 հազ. դրամ՝ թարգմանչական ծառայություններ իրականացնելու նպատակով, գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով: Օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների կողմից հետախուզվող անձանց ՀՀ տարածքում հայտնաբերման և ձերբակալման դեպքում անհրաժեշտություն է առաջանում նրանց հետախուզում հայտարարած պետությունների իրավասու մարմիններից ստացված դատավարական փաստաթղթերը հաստատված հայերեն թարգմանությամբ ներկայացնել ՀՀ դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478¹ 478², 478³-

-րդ հողվածների հիման վրա ժամանակավոր, այնուհետև՝ հանձնելու նպատակով կալանավորում կիրառելու միջնորդությամբ: Ինչպես նաև անհրաժեշտություն է առաջանում հայերեն լեզվին չտիրապետող անձանց դատարանի կայացրած որոշումները հաստատված թարգմանությամբ տրամադրելու համար: Տարբեր լեզուներով ստացված դատավարական փաստաթղթերի հաստատված թարգմանությունները դատարան ներկայացնելու անհրաժեշտություն է առաջանում նաև ՀՀ գլխավոր դատախազի կողմից անձանց հանձնելու մասին որոշում կայացնելու դեպքում, երբ որոշումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի հիման վրա բողոքարկվում են դատարան: 2022թ.-ին Վարչական ծառայությունների հողվածով 2021թ.-ի նկատմամբ փոփոխություններ նախատեսված չէ:

8. 2022թ.-ին համակարգչային ծառայությունների համար նախատեսվել է 33271.0 հազ. դրամ՝ 2021թ.-ի նկատմամբ ևս փոփոխություններ նախատեսված չէ:

9. Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ հողվածով նախատեսվել է 3960.0 հազ. դրամ՝ ՀՀ դատախազությունում քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, նրանց մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական և շարունակական կատարելագործման համար: «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպում է Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները՝ համապատասխան մարմինը, իսկ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 12-րդ կետով՝ վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

10. Տեղեկատվական ծառայությունների համար նախատեսված է 7098.6 հազ. դրամ պաշտոնական տեղեկագրերի, թերթերի, մասնագիտական ամսագրերի ձեռքբերման համար, տարբեր հայտարարությունների տպագրման, ՀՀ գլխավոր դատախազության «Օրինականություն» գիտագործնական տեղեկագրի տպագրման համար, հանրային հեռուստատեսությամբ, այլ ՋԼՄ-ների միջոցով, հանրության ներգրավմամբ դատախազական համակարգի գործունեության հրապարակայնության ապահովման համար: Այս հողվածով 2021թ.-ի համեմատ փոփոխություն նախատեսված չէ:

11. Կառավարչական ծառայություններ հողվածով նախատեսված է ձեռք բերել փորձաքննությունների ծառայություններ, ինչը պայմանավորված է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի կողմից իրականացվող ՀՀ ՊՆ գնումների գործընթացում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների ստուգման հետ: 2022թ. նախատեսվել է իրականացնել 14591.4 հազ. դրամի փորձաքննության ծառայություն, որում ևս 2021թ.-ի համեմատ փոփոխությունը պայմանավորված է պետական շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունների փորձաքննությունների

իրականացմամբ և արժեթղթերի կնքված գործարքների վերաբերյալ տեղեկանքներ ստանալու մասին «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությանը, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացաժ արժեթղթերի հաշիվների ցանկի, յուրաքանչյուր հաշվի տեսակի և կարգավիճակի վերաբերյալ ծառայողական տեղեկությունների տրամադրման, ինչպես նաև բաժնետոմսերի և բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ ցանկացած ծառայողական տեղեկությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» 03.09.20 թվականի ՀՀ կառավարության N 1481-Ն որոշմամբ:

12. Ներկայացուցչական ծախսեր հոդվածով 8000.0 հազ. դրամը նախատեսված է խորհրդակցությունների, կոնֆերանսների, ՀԿ-ների հետ համատեղ ՀՀ դատախազության գործունեության մասին հանրային տեղեկատվության ապահովման միջոցառումների կազմակերպման համար: 2021թ.-ի բյուջեով նախատեսվում է 8000.0 հազ. դրամ, հետևաբար 2021թ. ներկայացուցչական ծախսեր հոդվածով նույնպես նախատեսվում է 8000.0 հազ. դրամ:

13. Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար նախատեսված է 2200.0 հազ. դրամ՝ 800.0 հազ. դրամ անվտանգության ապահովման այլ ծառայությունների և 1400.0 հազ. դրամ արխիվային փաստաթղթերի պահպանման ծառայությունների համար: Այս հոդվածով 2021թ.-ի համեմատ փոփոխություն նախատեսված չէ:

14. Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածով 2022թ. համար նախատեսված է 15000.0 հազ. դրամ գումար, որն անհրաժեշտ է 28 շենքերի պահպանության համար, ինչը նվազագույն գումարն է:

15. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված է 25730.2 հազ.դրամ՝ 1000.0 հազ.դրամ քարթրիջների լիցքավորման, 4730.2 հազ.դրամ գրասենյակային և համակարգչային սարքերի /կոնդիցիոներների, տպիչների, համակարգիչների, սկաներների, հեռախոսների, ջեռուցման կաթսաների/ ընթացիկ նորոգման և պահպանման համար, 20000.0 հազ. դրամ ծառայողական ավտոմեքենաների ընթացիկ նորոգման և պահպանման համար:

2022 թվականի համար նույնպես տրանսպորտային նյութերի և ավտոմեքենաների սպասարկման համար տրամադրվող գումարը հաշվարկվել է յուրաքանչյուր ավտոմեքենայի կտրվածքով 1200.0 հազ. դրամի չափով, որը դատախազության դեպքում չի կարող կիրառվել, քանի որ դատախազության հաշվեկշռում առկա յուրաքանչյուր ավտոմեքենայի բենզինի միջին ամսական ծախսը կազմում է 250լ (հաշվարկը

իրականացվում է յուրաքանչյուր ավտոմեքենայի ցուցիչի վազքի չափով), հետևաբար տարեկան ծախսի գումարը միայն բենզինի հաշվարկով կազմում է 1200.0 հազ. դրամ (250x12x400դրամ), ինչը նշանակում է, որ ավտոմեքենաների սպասարկման, անվադողերի, քսայուցերի, մարտկոցների ձեռքբերման համար գումար չի տրամադրվի, ինչը անհնար է դատախազության բնականոն աշխատանքները կազմակերպելու համար:

16. Գրասենյակային նյութեր և հագուստ հողվածով նախատեսվում է 113721.7 հազ. դրամ, որից 74030.4 հազ. դրամը՝ համաձայն ՀՀ կառավարության 09.07.2020թ N 1158-Ն որոշման ՀՀ դատախազության դատախազներին հատկացվող համազգեստի գումարն է, իսկ մնացած 39691.3 հազ. դրամը նախատեսված է գրասենյակային պիտույքների, քատրիջների, թղթի, ձևաթղթերի և այլնի ձեռքբերման համար:

17. Տրանսպորտային նյութեր հողվածով նախատեսված է 60400.0 հազ. դրամ, հաշվարկը կատարվել է 67 ավտոմեքենաների նվազագույն ծախսի հաշվարկով (67*1200.0-20000.0):

18. ՀՀ դատախազության 28 սեփականության իրավունքով շենքերի և 23 անհատույց օգտագործմամբ տրված շենքերի կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերման համար նախատեսվել է 7500.0 հազ. դրամ:

19. Այլ նպաստներ բյուջեից հողվածով նախատեսված է ՀՀ կառավարության՝ ՀՀ դատախազներին մշտական բնակության վայրից դուրս գործուղելիս բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինության դեպքում դրամական փոխհատուցում տալու կարգը և չափը սահմանելու մասին 15.03.2018թ. N 256-Ն որոշման համաձայն դատախազության 56 դատախազներին տրամադրել դրամական փոխհատուցում՝ 27010.0 հազ. դրամի չափով, իսկ 16 հունվարի 2020 թվականի ՀՀ կառավարության N 40-Լ որոշմամբ՝ նախաքննություն, հետաքննություն, այդ թվում՝ օպերատիվ հետախուզական գործունեություն, հարկային և մաքսային մարմինների կողմից հսկողական գործունեություն իրականացնող, ինչպես նաև դատախազությունում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցման տրամադրման պիլոտային ծրագրի շրջանակներում հաշվարկված 125300.0 հազ. դրամ գումար (հաշվարկը կցվում է աղյուսակի տեսքով):

20. Պարտադիր վճարներ հողվածով նախատեսված է 6331.0 հազ. դրամ, որից 5616.0 հազ. դրամը նախատեսված է աղբահանության համար՝ համաձայն աղբահանության և սանիտարական մաքրման համար 2011 թվականի հունիսի 23-ին ընդունված 237-Ն ՀՀ օրենքի, իսկ 715.0 հազ. դրամը՝ ավտոմեքենաների տեխզնության և բնապահպանական վճարների համար:

Մինչ 2022թ.-ի համար նախատեսված հաշվարկների իրականացումը, հարկ է նշել, որ 2022թ.-ին նախատեսվում է կատարել դատափորձագիտական բնագավառի աշխատողների աշխատավարձի բարձրացում առնվազն 30%-ի չափով, իսկ անհրաժեշտ այլ ծախսերի կատարումը, որոնք անհրաժեշտ են փորձաքննությունների իրականացման շարունակական պատշաճ ընթացքն ապահովելու համար, կպահանջվի հատկացվող գումարի չափի ավելացում նախորդ ժամանակահատվածի համեմատ շուրջ 20%-ի չափով: Այն պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ նախորդ

տարիների ընթացքում երկրում տեղի ունեցած գնաճով, հնարավոր կոռուպցիոն ռիսկերից խուսափելու անհրաժեշտությամբ, որը հանդիսանում է Կառավարության ռազմավարության կարևորագույն խնդիրներից մեկը, կազմակերպությունում աշխատող և 2021 թվականի ընթացքում նախատեսվող փորձագիտական ստորաբաժանումների հզորությունների զարգացման համար անհրաժեշտ մասնագիտացում և փորձ ունեցող փորձագետներով համալրման և արդեն իսկ գործունեություն ծավալող մի շարք փորձագետների նեղ մասնագիտացման անհրաժեշտությամբ՝ ըստ փորձաքննությունների բնույթի և առանձանահատկությունների, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունը, որը նախատեսում է հանրային հատվածի ծառայողների վարձատրության բարձրացում՝ աշխատաշուկայում մրցունակ աշխատավարձի ձևավորման նպատակով:

